ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **19 հունվարի 2026թ.**

2026թ.-ի հունվարի 19-ին, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ արևային պանելների տեղադրման աշխատանքների ձեռքբերման թիվ ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ա. Մովսիսյան՝	Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ,
Դ. Հովհաննիսյան՝	«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի ռեկտորի աշխատակազմի ղեկավար,
Դ. Կարախանյան՝	«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի գլխավոր ինժեներ,
Ա. Վիրաբյան՝	Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության պետ,
Ա. Մալազյան՝	Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մովսիսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար և «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Առաքելյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգի Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց «Էկովիլ» ՍՊԸ-ի կողմից 03.11.2025 թվականին ներկայացված հայցադիմումի քննության արդյունքներով 2026 թվականի հունվարի 9-ին թիվ ԵԴ2/11732/02/25 քաղաքացիական գործով կայացված վճիռը, որով «Էկովիլ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բավարարվել է մասնակի: Մասնավորապես՝ վճռվել է «Էկովիլ»ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՈՒՏՔ № 4155
«20» 01 2026թ.

գիտության կոմիտեի՝ «ԷկոՎիլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին բավարարել մասնակի, անվավեր ճանաչել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար արևային պանելների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված՝ թիվ ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23.10.2025 թվականին կազմված թիվ 2 արձանագրությամբ «ԷկոՎիլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ հայցը մնացած՝ «Էկովիլ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասով, մերժել:

Հանձնաժողովն ի գիտություն ընդունելով վերը նշված փաստական հանգամանքները, միևնույն ժամանակ արձանագրում է, որ ընթացակարգի հրավերով սահմանված աշխատանքի կատարման դիմաց վճարումները նախատեսված էին իրականացնել 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին, սակայն ներկայացված բողոքներով պայմանավորված՝ Ընթացակարգը 2025 թվականին եղել է կասեցված: Այդպիսով, աշխատանքների կատարումն ու համապատասխան վճարումներն ենթակա էին կատարման 2025 թվականին, քանի որ այդ տարվա ֆինանսական միջոցներով էր նախատեսվում արևային պանելների տեղադրման աշխատանքների ձեռքբերումը, մինչդեռ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2026 թվականի բյուջեով նշված գումարը չի նախատեսվել, որպիսի փաստով պայմանավորված 2026 թվականին նշված աշխատանքը կատարելու դեպքում համապատասխան վճարումներ չեն կարող կատարվել:

Ելնելով վերը նշված փաստական հանգամանքներից, Հանձնաժողովն որոշեց.

1. Ընթացակարգի շրջանակներում հաղթող մասնակցի հետ պայմանագիր չկնքել:
2. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Կարգի 14-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներով՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:
3. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Մովսիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Դ. Հովհաննիսյան _____

Դ. Կարախանյան _____

Ա. Վիրաբյան _____

Ա. Մալազյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Առաքելյան _____

*Неофициальный перевод**

ПРОТОКОЛ № 4

ЗАСЕДАНИЯ ОЦЕНОЧНОЙ КОМИССИИ ПРОЦЕДУРЕ ЗАКУПКИ ПОД КОДОМ ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46

г. Ереван **19 января 2026г.**

В 19 января 2026 года в здании Комитет по высшему образованию и науке, расположенном по адресу: РА, г. Ереван, Орбели 22, состоялось заседание оценочной комиссии (далее - Комиссия) по закупкам работ по установке солнечных панелей под кодом ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 (далее – процедура закупки).

В заседании приняли участие следующие члены Комиссии:

А. Мовсисян:	Заместитель председателя Комитет по высшему образованию и науке,
Д. Оганесян:	Руководитель аппарата ректора Фонда "Ереванский государственный университет",
Д. Караханян:	Главный инженер Фонда "Ереванский государственный университет",
А. Вирабян:	Главный специалист отдела бухгалтерского учета финансово-экономического и учетного управления Комитета высшего образования и науки,
А. Малазян:	Старший специалист финансово-экономического и бухгалтерского учёта Комитета по высшему образованию и науке.

Заседание комиссии проходило под председательством А. Мовсисяна. На заседании присутствовал секретарь Комиссии А. Аракелян – представитель ООО "ПРОМОУШН".

Принимая во внимание, что состав Комиссии состоит из пяти членов, и все члены Комиссии присутствовали на заседании Комиссии, в соответствии с установленными требованиям и правилом 26 (2) Регламента № 526-N от 04 мая 2017 года, заседание комиссии было признано правомочным и было объявлено открытым.

ПОВЕСТКИ ДНЯ ЗАСЕДАНИЯ КОМИССИИ

1. О признании процедуры несостоявшейся и установлении срока бездействия.

1. О ПРИЗНАНИИ ПРОЦЕДУРЫ НЕСОСТОЯВШЕЙСЯ И УСТАНОВЛЕНИИ СРОКА БЕЗДЕЙСТВИЯ ПРОЦЕДУРЫ

Секретарь Комиссии по процедуре А. Аракелян представил членам Комиссии решение, вынесенное 9 января 2026 года по гражданскому делу № ԵԴ2/11732/02/25 по результатам рассмотрения искового заявления, поданного ООО «Эковил» 03.11.2025 года, которым иск ООО «Эковил» против Комитета по высшему образованию и науке был удовлетворён частично.

**В тексте, в случае возникновения несовпадений и разночтений, предпочтение отдаётся варианту на армянском языке.*

В частности, судом постановлено частично удовлетворить иск ООО «Эковил» против Комитета по высшему образованию и науке РА о признании недействительным решения об отклонении заявки ООО «Эковил» и о признании его выбранным участником, а именно — признать недействительным решение оценочной комиссии процедуры закупки, объявленной под кодом БКГК-БМАШՁԲ-25/46 с целью приобретения работ по установке солнечных панелей для нужд Комитета по высшему образованию и науке РА, оформленное протоколом № 2 от 23.10.2025 года, об отклонении заявки ООО «Эковил», при этом в остальной части иска, касающейся требования о признании ООО «Эковил» выбранным участником, отказать.

Комиссия, приняв к сведению вышеуказанные фактические обстоятельства, одновременно отмечает, что выплаты за выполнение работ, установленных приглашением процедуры, были предусмотрены за счёт бюджетных средств 2025 года, однако в связи с представленными жалобами Процедура в 2025 году была приостановлена. Таким образом, выполнение работ и соответствующие выплаты подлежали осуществлению в 2025 году, поскольку именно финансовыми средствами этого года было предусмотрено приобретение работ по установке солнечных панелей, тогда как в бюджете Комитета по высшему образованию и науке на 2026 год указанная сумма не предусмотрена, вследствие чего в случае выполнения указанных работ в 2026 году соответствующие выплаты не могут быть осуществлены.

Исходя из вышеуказанных фактических обстоятельств, Комиссия решила:

1. " В рамках процедуры не заключать договор с участником, признанным победителем.

2. " Руководствуясь пунктом 6 части 1 статьи 26, подпунктом 4 пункта 1 статьи 37 Закона РА «О закупках», а также подпунктом 6 пункта 14 Порядка, признать Процедуру несостоявшейся.

3. " Руководствуясь требованиями части 3 статьи 10 Закона РА «О закупках», установить срок бездействия с дня, следующего за днем опубликования решения об объявлении Процедуры несостоявшейся, по 10-й календарный день включительно.

За: 5, против: 0.

Председатель оценочной комиссии:

А. Мовсисян _____

Члены комиссии:

Д. Оганесян _____

Д. Караханян _____

А. Вирабян _____

А. Малазян _____

Секретарь оценочной комиссии:

А. Аракелян _____

**В тексте, в случае возникновения несовпадений и разночтений, предпочтение отдаётся варианту на армянском языке.*